# ՀՈՒՆՎԱՐ ՓԵՏՐՎԱՐԸ ԵՆԿ-Ի ՀԵՏ | 2022

Սիրելի՛ ընթերցողներ, սիրով ներկայացնում ենք Ձեզ ԵՆԿ հերթական ամսաթերթը, որում կպատմենք կազմակերպության հունվարից փետվար ամիսների անցուդարձի մասին:

## ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՔԱՂԱՔ

Գյումրու տեխնոլոգիական կենտրոնում կայացավ Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող «Էրազմուս+» ծրագրի շրջանակներում իրականացվող «Երիտասարդների քաղաք. զբոսաշրջային ենթակառուցվածքների զարգացման գործընթացում երիտասարդների դերի բարձրացում» խորագրով երկարաժամկետ միջազգային ծրագրի ամփոփիչ համաժողովը Գյումրիում, որին ներկա էին ծրագրի 20 մասնակիցներ Հայաստանից, Վրաստանից, Ուկրաինայից, Խորվաթիայից և Չեխիայից, ինչպես նաև պետական և տեղական իշխանությունների, հասարակական և զբոսաշրջային բիզնես ոլորտների ներկայացուցիչներ:

ԿԱՐԴԱԼ ԱՎԵԼԻՆ

## ՇԱՐԺՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՆԿ-Ի ՀԵՏ

Ուկրաինայի Սումի քաղաքում ս.թ. հունվարի 18-24-ը տեղի է ունեցել «Սոցիալական ազդեցություն» խորագրով Էրազմուս+ երկարաժամկետ ծրագրի երկրորդ դասընթացը ծրագրերի սոցիալական ազդեցությունը չափելու թեմայով:
Հայաստանի թիմը ներկայացրել են Աստղիկ Հովհաննիսյանը՝ «Գյումրու երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ի (ԵՆԿ) ծրագրի համակարգող, Անժելա Ջանոյանը՝ ԵՆԿ ՀԿ «Գյումրու երիտասարդների տուն»

բաց երիտասարդական կենտրոնի երիտասարդական աշխատող, և Մարիամ Հարությունյանը՝ ԵՆԿ գործընկեր Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Գյումրու մասնաճյուղի դասախոս, ասպիրանտ և վարչական աշխատակից:

ԿԱՐԴԱԼ ԱՎԵԼԻՆ

Վրաստանի Ռուսթավի քաղաքում ս.թ. փետրվարի 4-11-ը տեղի է ունեցել **«Reinforcing Games as an Educational Tool for Social Change»** խորագրով Էրազմուս+ միջազգային դասընթացը սեղանի խաղերի և սոցիալական ներառականության թեմայով:
Հայաստանի թիմը ներկայացրել են Գյումրու տեխնոլոգիական կենտրոնի կրթական ծրագրերի պատասխանատու Աննա Կարապետյանը, Երևանի մանկապատանեկան ստեղծագործության քաղաքային կենտրոնի կրթական հարթակի համակարգող Սոնա Դավթյանը և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Էօրնեկեան» հանրակրթական և «Հայ ասպետ» դպրոցների ուսուցիչ Գոռ Գալստյանը:

ԿԱՐԴԱԼ ԱՎԵԼԻՆ

Վրաստանի Բակուրիանի քաղաքում ս.թ. փետրվարի 5-13-ը տեղի է ունեցել **«Digital Meditation»** խորագրով Էրազմուս+ երիտասարդական փոխանակման ծրագիրը առողջ ապրելակերպի և թվային գրագիտության թեմայով:
Հայաստանի թիմը ներկայացրել են ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղի ուսանողներ Հակոբ Հակոբյանը և Ալվարդ Զիրոյանը, Երևանի Բրյուսովի անվան համալսարանի ուսանող Աննա Կարապետյանը, ԵՊՀ ուսանող Միլենա Մկոյանը և «Սևանի երիտասարդական ակումբ» ՀԿ-ի կամավոր Մարիամ Գալստյանը: Հայաստանի թիմը ղեկավարում է «ԵՄ-ն հանուն երիտասարդների շրջանավարտների ցանց» ծրագրի շրջանավարտ Թոռնիկ Աղաջանյանը:

ԿԱՐԴԱԼ ԱՎԵԼԻՆ

---

**ՇԻՐԱԿԻ ԶՄԵՌ 2022**

Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ի թիմը և «Գյումրու երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնի սաները մասնակից դարձան «Շիրակի Ձմեռ-2022» մարզամշակութային միջոցառմանը Շիրակի մարզի Մեծ Սարիար բնակավայրի անտառում: «Գյումրու երիտասարդների տան» սաները ներկայացրին իրենց ձեռքի աշխատանքները՝ տիկնիկները, էկոօճառները և թևնոցները:

ԿԱՐԴԱԼ ԱՎԵԼԻՆ

## ԳՅՈՒՄՐՈՒ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՏՈՒՆ

Փետրվարը կենտրոնում սկսվեց և շարունակվեց ուրախ առիթներով: Կենտրոնում մեկնարկեց Ֆրանսերենի ակումբը, կայացան եվրոպական ակումբի հանդիպումները և զուգահեռ շարունակվեցին անգլերենի, ստեղծարար, ձեռակերտ, տեսանյութերի մոնտաժի ակումբները:

Թեմատիկ՝ արվեստի շաբաթվա ընթացքում անցկացվեց «Արվեստը մեր մեջ» աշխատարանը, իսկ սիրո շաբաթը հնարավորություն տվեց երիտասարդների օրվա և սիրո բարեխոս Ս.Սարգսի տոնի մասին զրուցել տեր Փավստոս քահանայի հետ:

Ընթերցանության շաբաթը հագեցած էր ուսումնաճանաչողական այցով. B612 Art Gallery-ում սաները ծանոթացան արվեստանոցի թիմի, Մամիկոն ու Աշոտ Միքայելյանների հետ, ուսումնասիրեցին JEVO-երի աշխատանքները: Իսկ «Կոմիքսներ» թեմայով վարպետաց դասի ընթացքում Անի Խաչատրյանը մասնակիցներին ներկայացրեց կոմիքսների մասին և միասին ստեղծեցին սեփական աշխատանքները:

«Երիտասարդ սոցիալական ձեռներեցները հանուն համայնքի զարգացման» ծրագրի շրջանակներում Լոռու մարզի 10 համայնքների 20 երիտասարդներ ուսումնական այց ունեցան «Գյումրու երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոն, որտեղ ծանոթացան կենտրոնի գործունեության, տրամադրվող ծառայությունների մասին:

ԿԱՐԴԱԼ ԱՎԵԼԻՆ